ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21 նոյեմբերի 2019 թվականի թիվ 457-Ա

## ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրով՝

կարգադրում եմ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Դեղձավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2019 թվականի նոյեմբերի 26-ից մինչև նոյեմբեր 29ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել համապատասխանության աուդիտ հետևյալ կազմով՝

Հերմինե Դավթյան - մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ։

Կարեն Նազարյան - մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Տավուշի մարզի «Դեղձավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2017, 2018 թվականների ընթացքում իրականացված ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին։

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի վարիչի ժ/պ Արտեմ Ոսկանյանին։

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

11/21/2019

X

Signed by: STEPANYAN TATUL 2501680073

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Թ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

21 նոյեմբեր 2019թ.
ք. Իջևան